

Հայաստանի Հանրապետության Կառավարություն Որոշում

11 օգոստոսի 2005 թվականի N 1223-Ն

Առանձին կատեգորիայի աշխատողների՝ օրական 24 ժամ աշխատաժամանակի տեւողությամբ պայմանավորված աշխատանքների ցանկը սահմանելու մասին

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել առանձին կատեգորիայի աշխատողների՝ օրական 24 ժամ աշխատաժամանակի տեւողությամբ պայմանավորված աշխատանքների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը եւ տարածվում է 2005 թվականի հունիսի 21-ից հետո ծագող հարաբերությունների վրա:

Հավելված
ՀՀ կառավարության
2005 թվականի օգոստոսի 11-ի
N 1223-Ն որոշման

Ցանկ

Առանձին կատեգորիայի աշխատողների՝ օրական 24 ժամ աշխատաժամանակի տեւողությամբ պայմանավորված աշխատանքների

1. Հպակային ցանցի եւ քարշային ենթակայանների հերթապահ էլեկտրամեխանիկների, էլեկտրամոնտյորների, ավտոմատրիսի մեքենավարների եւ մեքենավարների օգնականների աշխատանքներ,
2. Կապի հերթափոխային ճարտարագետների՝ բարձր եւ ցածր հաճախականության ընտրողական կապի, օպտիկամանրաթելային հեռախոսային կայանների հերթապահ էլեկտրամեխանիկների, հեռախոսակապի տեղեկատու հերթափոխային օպերատորների աշխատանքներ,
3. Գծանցի հերթապահների, պահակների աշխատանքներ,
4. Լոկոմոտիվային բրիգադներին սպասարկող հերթապահ բուժքույրերի աշխատանքներ,
5. Հանգստյան տան հերթապահների աշխատանքներ,
6. Պահակների աշխատանքներ,
7. Հերթապահ ռադիոէլեկտրամեխանիկների աշխատանքներ,
8. Ուղեւորատար գնացքների ուղեկցորդների, մոնտյորների (էլեկտրիկների), մեխանիկների եւ բրիգադավարների, գնացքների պետերի աշխատանքներ,
9. Ջուկի հրամանատարների, ավագ հրաձիգների, հրաձիգների աշխատանքներ,
10. Երթակարգավարների աշխատանքներ,
11. Պատասխանատու հերթապահ օպերատորների աշխատանքներ,
12. Փոխանակող օպերատորների աշխատանքներ,
13. Գծային տեղամասի աշխատողների աշխատանքներ,
14. Հեռահաղորդակցման կայանների հերթափոխային աշխատողների աշխատանքներ,
15. Երեւանի ռադիոհեռուստահաղորդիչ կենտրոնի, մարզային տարածաշրջանային արտադրամասերի հեռուստակայանների հերթափոխային անձնակազմի աշխատանքներ,
16. Ռադիոմոնիթորինգի վարչության ռադիոհսկման մասնագետների աշխատանքներ,
17. Էլեկտրաէներգետիկական համակարգի անցագրային բյուրոյի հերթապահների աշխատանքներ,
18. Գազատրանսպորտային եւ գազաբաշխիչ համակարգի կարգավորման եւ օպերատորական ծառայություններ,
19. Գազաճնշակայանների ագրեգատների կարգավորման եւ սպասարկման աշխատանքներ,
20. Գազի վթարային վերանորոգման ծառայություններ,
21. Կարգավարների աշխատանքներ,

22. Ենթակայանների հերթապահ անձնակազմի աշխատանքներ,
23. Պահպանության տեսուչների (պահակային ծառայության) աշխատանքներ,
24. ԲԷԿ-ի հերթափոխային աշխատանքներ,
25. Հիդրոագրեգատների հերթապահ մեքենավարների աշխատանքներ,
26. Հիդրոշինությունների շարժիչավարների աշխատանքներ,
27. Հիվանդանոցային բուժօգնություն իրականացնող անձնակազմի աշխատանքներ,
28. Շտապ եւ անհետաձգելի բուժօգնություն իրականացնող անձնակազմի աշխատանքներ,
29. Պետական արգելոցների ուղեփակոցի տեսուչ-պահակների աշխատանքներ,
30. "Չվարթնոց" ավիաօդերեւութաբանական կենտրոնի մասնագետների կողմից կատարվող աշխատանքներ,
31. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության "Հայաստանի հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի պետական ծառայություն" ՊՈԱԿ-ի ("Հայպետհիդրոմետ") օդերեւութաբանական, ակտիւնոմետրիական (ճառագայթաչափական), օզոնաչափական դիտարկումներ իրականացնող մասնագետների կողմից կատարվող աշխատանքներ,
32. Հիդրոօդերեւութաբանական կանխատեսումներ կազմող մասնագետների կողմից կատարվող աշխատանքներ,
33. Հիդրոօդերեւութաբանական տվյալների փոխանակման ստորաբաժանումների մասնագետների կողմից կատարվող աշխատանքներ,
34. Հոգաբարձության (խնամակալության), բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունների (մանկատների), առողջապահության եւ կրթության բնագավառների հնոցապանի աշխատանքներ,
35. Անասնապահի աշխատանք,
36. Բեռուստառադիոընկերությունների հերթափոխային աշխատողների աշխատանքներ: